

«ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՕԳՈՍՏՈՍ - 2018



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	19
1.3. Ջրահեռացման համակարգ	19
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	21
1.5. Էներգոհամակարգ	22
1.6. Մեքենա-մեխանիզմներ	25
2. Առևտրային տնօրինություններ	26
2.1. Բաժանորդների տվյալներ	27
2.2. Հասույթ	27
2.3. Գանձում	30
2.4. Դեբիտորական պարտքեր	30
2.5. Ջրաչափեր	32
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	33
3. Տեխնիկական տնօրինություն	34
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	35
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	37
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	40
3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ	41
4. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	43
4.1. Համակարգչային ցանց	44
4.2. Ինտերակտիվ համակարգ	44
4.3. Բջջային օպերատորներ և ինտերնետ	44
4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր	44
5. Լրատվական ծառայություն	45
6. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	48
6.1. Փաստաթղթերի մշակում	49
6.2. Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ	49
6.3. Դասընթացներ	50
6.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	50

ՀԱՅԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





Հաշվետու ժամանակահատվածում Տարածաշրջանների Տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

1.1 Ջրամատակարարման համակարգի կառավարում

Քաղաք Երևան

● Դ.Անհաղթ փողոցում վթարների ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է D=250մմ թուջե ջրագծի D=100մմ L=30մ գնասված հատված: Վերջինս անջատվել է ջրագծից արդյունքում իննայելով $Q=2\text{լ/վ}$ ջրաքանակ:



Դ.Անհաղթ փողոցի ջրամատակարարման սխեմա



Ավետիսյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ավետիսյան փողոցի 2 և 4 շենքերը սնուցող D=100մմ ջրագծի վրա վթար էր հայտնաբերվել: Այն վերացնելու նպատակով ջրագծի մեջ ներարկվել է D=63մմ L=50մ պոլիէթիլենային խողովակ: Տրված լուծումը թույլ է տվել շահագործումից հանել D=100մմ L=50մ և D=50մմ L=20մ ջրագծի հատվածը, ինչի շնորհիվ ցանցում բարձրացել է ջրի ճնշումը և իննայվել $Q=0.8\text{լ/վ}$ ջրաքանակ:

● Հովսեփ Էմին և Փափազյան փողոցների խաչմերուկում առաջացած վթարը վերացնելու նպատակով D=100մմ ջրագծի մի հատվածը փոխարինվել է D=80մմ պողպատե խողովակով: Աշխատանքի արդյունքում իննայվել է $Q=1,0\text{լ/վ}$ ջրաքանակ:



Հ.Էմին փողոցի ջրամատակարարման սխեմա

● Կոնդ թաղամասը սնուցող $D=80$ մմ ջրագծի Պարոնյան փողոցով անցնող հատվածում վթարված ջրագծի մեջ ներարկվել է $D=63$ մմ նոր պոլիէթիլենային խողովակ և խնայվել $Q=1.0$ լ/վ ջրաքանակ:




Պարոնյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Հաղթանակ գյուղում խցափակումով շահագործումից հանվել են $D=25$ մմ $L=260$ մ և $D=25$ մմ $L=200$ մ հին վթարված ջրագծեր: Աշխատանքի արդյունքում խնայվել է $Q=1.0$ լ/վ ջրաքանակ:




Հաղթանակ գյուղի ջրամատակարարման սխեմա

● Մերձավան գյուղի տարածքում թուջե $D=150$ մմ վթարային խողովակի մեջ ներարկվել է $D=63$ մմ $L=150$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Բաժանորդների ջրամատակարարումը վերականգնելու նպատակով կառուցվել է ինչպես նաև $D=32$ մմ $L=10$ մ ջրագիծ: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D=150$ մմ $L=280$ մ թուջե և $D=150$ մմ $L=250$ մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է նաև $Q=2$ լ/վ ջրաքանակ:



Մերձավան գյուղի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Գյումրի



Վարդգաթ թաղամասի ջրամատակարարման սխեմա

● Վարդգաթ թաղամասը սնող վթարված պողպատե $D=300$ մմ $L=300$ մ ջրագիծը հանվել է շահագործումից և ներարկման փոքրով կառուցվել է $D=63$ մմ $L=300$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=10$ լ/վ ջրաքանակ:

● Քաղաքի 8-րդ զինվորական թաղամասի սնուցումը հետագայում գործարանի տարածքում գտնվող պոմպակայանից անջատելու նպատակով՝ այդ թաղամասի սնուցող ջրագիծը անջատվել է $D=600$ մմ ջրագծից, իսկ փոխարենը կառուցվել $D=125$ մմ $L=30$ մ նոր պողպատե ջրագիծ՝ Հովունու ՕԿՁ-ից սնվող ավելի բարձր ճնշում ունեցող $D=250$ մմ ջրագծին միացնելու նպատակով:



8-րդ զ/թ ջրամատակարարման սխեմա



Խրիմյան Հայրիկ փողոցի ջրամատակարարման սխեմա



Խրիմյան Հայրիկ 5-րդ շենքի ջրամատակարարման սխեմա

● Ղանդիլյան փողոցի $D=100$ մմ պողպատե ջրագծից անջատվել է $D=50$ մմ $L=30$ մ վթարային ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է $Q=0.6$ լ/վ ջրաքանակ: Նույն փողոցով անցնող $D=300$ մմ թուջե ջրագծից անջատվել է $D=100$ մմ $L=250$ մ վթարային ջրագիծ՝ խնայելով $Q=2$ լ/վ ջրաքանակ:



Ղանդիլյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Ղանդիլյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ղանդիլյան փողոցով անցնող $D=300$ մմ թուջե ջրագծից անջատվել է $D=100$ մմ $L=250$ մ վթարային ջրագիծ՝ խնայելով $Q=2$ լ/վ ջրաքանակ:

● Աբովյան փողոցով անցնող $D=300$ մ բուջե ջրագծից խցափակման միջոցով շահագործումից հանվել է $D=32$ մ $L=65$ մ պողպատե վթարային ջրագիծ, ինչի շնորհիվ խնայվել է $Q=1,6$ լ/վ ջրաքանակ:



Աբովյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Գումիտաս փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ալավերդյան փողոցով անցնող $D=200$ մ $L=300$ մ վթարային ջրագիծը շահագործումից հանելու նպատակով անջատվել է Կոմիտաս փողոցի ջրագծից: Կատարված աշխատանքի արդյունքում խնայվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ և բարձրացել փողոցի ջրամատակարարման ցանցում ջրի ճնշումը:

● Ղանդիլյան 47 շենքի ջրամատակարարման համակարգը փոխելու նպատակով խցափակվել և շահագործումից հանվել է $D=100$ մ $L=25$ մ նախկին պոմպակայանից դուրս եկող վթարային ջրագիծը: Փոխարենը կառուցվել է նոր $D=63$ մ $L=25$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Աշխատանքներից հետո բարելավվել է վերը նշված շենքի ջրամատակարարումը և խնայվել $Q=0,7$ լ/վ ջրաքանակ:



Ղանդիլյան 47 շենքի ջրամատակարարման սխեմա

● Նորքի 1-ին նրբանցքի թվով 50 տների ջրամատակարարումն իրականացվում էր Նորքի 2-րդ նրբանցքով անցնող $D=150$ մ ջրագծից: Նշյալ տները սնուցող ջրագծից ավելի բարձրադիր գտնվելու պատճառով, ջրամատակարարումն իրականացվում էր բարձր ճնշումով, որը, սակայն, ավելցուկային էր: Խնդրի կարգավորման և ավելցուկային ճնշումների նվազեցման նպատակով իրականացվել է Ս.Խանգանդյան փողոցով անցնող, $D=200$ մ պողպատե ջրագիծը Նորքի 1-ին նրբանցքում գտնվող, գործող $D=50$ մ ջրագծին միացնող, $D=75$ մ $L=150$ մ նոր ջրագծի կառուցում, որը գտնվում է ավելի բարձր դիրքում: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է Նորքի 1-ին նրբանցքում գտնվող տների ջրամատակարարումը, կարգավորվել են ջրագծի ավելցուկային ճնշումների հետ կապված խնդիրները, ինչպես նաև նվազել է վթարների առաջացման հավանականությունը:




● Արցախի 24 և 24/1 շենքերը սնող ջրագիծը ամբողջովին քայքայվել էր, ինչը հանգեցնում էր հաճախակի վթարների: Խնդրի լուծման համար «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է կոռոզիայի ենթարկված ջրագծի փոխարինման աշխատանքներ վերոնշյալ հասցեներից մինչև պոմպակայան հասնող հատվածը: $D=150$ մ պողպատե ջրագծի $L=35$ մ հատվածը փոխարինվել է $D=90$ մ պոլիէթիլենային խողովակաշարով: Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, վերականգնվել է ջրամատակարարման շարունակականությունը:



- «Հարավ» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից Արցախի 4-րդ նրբանցքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում D=50մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել և գողման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 0.5լ/վ ջրաքանակ:

Քաղաք Վանաձոր

● Նախկին շահագործող կազմակերպությունների կողմից Չուխաջյան փողոցում նոր ցանցի կառուցումից հին ցանցի մի հատված շահագործումից չէր հանվել: Վթարների արդյունքում հայտնաբերված հին ցանցի D=200մմ L=150մ հատվածը դուրս է բերվել շահագործումից, իսկ դրանից սնվող շենքի միացումը տեղափոխվել է գործող ցանցի վրա:



Չուխաջյան 48-ի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Դիլիջան

● Դիլիջանում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Կամոյի փողոցում D=200մմ ջրագծի վրա հայտնաբերվել և ճեղքի գողման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում տնտեսվել է մոտ 2լ/վ ջրաքանակ:

Քաղաք Սևան

● Կոմիտաս և Բարաջանյան փողոցների ջրամատակարարումն իրականացվում էր D=20-63մմ լիովին քայքայված և հետագա շահագործման համար ոչ պիտանի ջրագծով, ինչը հանգեցնում էր հաճախակի վթարների և նկատելի ջրակորստի: Վերոնշյալ փողոցները սնող ջրագծից բացի խիստ քայքայված էին անգամ բաժանորդների մուտքագծերի խողովակները: Գոտիավորման խմբի մասնագետների և «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է համատեղ ուսումնասիրություն, որի արդյունքում պարզ է դարձել, որ թվով 22 բաժանորդներին սպասարկող ջրագծի մոտ L=780մ հատվածի վրա առկա են բազմաթիվ վթարներ, որոնց արդյունքում առաջացել էր մոտ 4.5լ/վ ջրակորուստ:



Խնդրի կարգավորման նպատակով իրականացվել են $D=40$ մմ $L=192$ մ ջրագծի կառուցման աշխատանքներ, ինչպես նաև փոխարինվել են բաժանորդների մուտքագծերի խողովակները: Տեղադրվել են նոր ջրաչափական հորեր, թվով 8 բաժանորդների առևտրային հաշվառքի սարքերը տեղափոխվել են սահմանազատման կետեր, որի արդյունքում սպառվող ջրաքանակը նվազել է 3.9 լ/վ-ով: Կատարված աշխատանքների արդյունքում այժմ վերոնշյալ փողոցներում ջրամատակարարումն իրականացվում է շահագործման համար հուսալի ջրագծերով, կանխվել են հնարավոր վթարներն ու ջրակորուստը, բացառվել են ապօրինի միացումները:

Քաղաք Մասիս

● Արարատյան փողոցը սնող քայքայված մետաղական $D=320$ մմ ջրագծի $L=100$ մ հատվածը փոխարինվել է $D=315$ մմ պոլիէթիլենային ջրագծով, որի վրա տեղադրվել են թվով 4 գոտի միացումներ: Նոր կառուցված ջրագծից կատարվել է 4 բաժանորդների ջրագծերի միացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կանխվել են հնարավոր վթարները, բարելավվել է ջրամատակարարումը:



● Քաղաքի 3-րդ թաղամասի 37 և 38 հանրակացարանների մասնաշենքերը սնող մետաղական ջրագիծը գտնվում էր խիստ քայքայված վիճակում, որի պատճառով հաճախակի առաջանում էին վթարներ, իսկ նշված շենքերի ջրամատակարարման համակարգում առկա ցածր ճնշումը թույլ չէր տալիս բնակչությանն ապահովել անհրաժեշտ ծավալի ջրաքանակով: «Մասիս» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են ջրագծի փոխարինման աշխատանքներ: $D=100$ մմ մետաղական ջրագծի $L=100$ մ հատվածը փոխարինվել է $D=50$ մմ պոլիէթիլենային խողովակաշարով: Կատարված աշխատանքների արդյունքում կանխվել է $0.5-1$ լ/վ ջրակորուստ, ցանցում վերականգնվել է անհրաժեշտ ճնշում, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը:

● «Մասիս» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից Մասիսի պոմպակայանից Նորաբացի պոմպակայան գնացող $D=500$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար, որի արդյունքում ընդհանուր առմամբ խնայվել է մոտ 8 լ/վ ջրաքանակ:

Քաղաք Արթիկ

● Շիրակացի փողոցով անցնող $D=110$ մմ $L=75$ մ ջրագծի մեջ ներարկվել է $D=63$ մմ $L=75$ մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է $Q=2$ լ/վ ջրաքանակ:



Շիրակացի փողոցի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Ալավերդի

● Սարահարթ թաղամասը սնող $D=250$ մմ ջրագծի վթարված հատվածը փոխարինելու շնորհիվ խնայվել է $Q=8$ լ/վ ջրաքանակ: Իսկ նույն թաղամասի $1/17$ շենքը սնող $D=50$ մմ ջրագծի $L=18$ մ հատվածը փոխարինելու արդյունքում հնարավոր է դարձել բարելավել նշված շենքի ջրամատակարարումը:



Սարահարթ թաղամասի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Ստեփանավան

● Իսահակյան փողոցից մինչև Տերյան փողոց ընկած հատվածում քայքայված ջրագիծը գտնվում էր մոտ 4մ խորության վրա, որի պատճառով դժվարանում էր վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը: Նշված հատվածը շահագործումից հանելուց հետո կառուցվել է $D=90$ մմ $L=390$ մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչի արդյունքում վերացել են գաղտնի վթարները, ցանցը դարձել է կառավարելի և խնայվել է $Q=1.5$ լ/վ ջրաքանակ: Իսկ Մեսրոպյան փողոցի 5-րդ դպրոցի տարածքով անցնող $D=100$ մմ $L=50$ մ վթարված ջրագծի շահագործումից հանելու նպատակով կառուցվել է $D=40$ մմ $L=50$ մ պոլիէթիլենային ջրագիծ, որի արդյունքում բարելավվել է դպրոցի ջրամատակարարումը և խնայվել $Q=0.6$ լ/վ ջրաքանակ:



Տերյան թաղամասի ջրամատակարարման սխեմա




Գ.Նժդեհ փողոցի ջրամատակարարման սխեմա

● Գ.Նժդեհ փողոցում շենքերի ջրամատակարարումը բարելավելու նպատակով կառուցվել է $D=110$ մմ $L=210$ մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչից հետո բարձրացել է ջրի ճնշումը և ցանցը դարձել է կառավարելի:

Քաղաք Սպիտակ

● Քրքորյան փողոցում հայտնաբերվել է $D=150$ մմ $L=110$ մ չգործող հին վթարային ջրագիծ, որը խցափակման միջոցով դուրս է բերվել շահագործումից: Աշխատանքի արդյունքում խնայվել է $Q=3,5$ լ/վ ջրաքանակ և բարձրացել ցանցում ջրի ճնշումը:



Քրքորյան փողոցի ջրամատակարարման սխեմա



Քրքորյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Խնկոյան փողոցում վթարային $D=63$ մմ $L=20$ մ ջրագծի հատվածը փոխարինելու շնորհիվ խնայվել է $Q=1,2$ լ/վ ջրաքանակ և բարձրացել ցանցում ջրի ճնշումը:

Քաղաք Վարդենիս

● Վ.Համբարձումյան փողոցի 7-րդ նրբանցքը դեռևս ԽՍՀՄ տարիներից չունի ջրամատակարարման համակարգ: Նախկինում նրբանցքի բնակիչներն օգտվում էին չգործող «Արևիկ» մանկապարտեզը սնող $D=50-80$ մմ մետաղական ջրագծից, որն ամբողջովին քայքայվել և վթարվել էր կասեցնելով բնակչության ջրամատակարարումը:

Խնդրի կարգավորման համար իրականացվել են ջրագծի վերակառուցման աշխատանքներ: Շահագործումից հանվել է $D=50-80$ մմ $L=150$ մ քայքայված մետաղական ջրագիծ և կառուցվել է նոր $D=63$ մմ $L=150$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Կառուցվել են ջրաչափական դիտահորեր և թվով 6 հասցեների սահմանազատման կետերում տեղադրվել են $D=15$ մմ ջրաչափական սարքեր:

Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ փողոցի բնակիչներն ապահովվել են շարունակական ջրամատակարարմամբ՝ նոր և հուսալի ջրագծից:



Քաղաք Մարտունի

● Մյասնիկյան փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում $D=160$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 8 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Նոյեմբերյան



Ամերիկյան թաղամասի ջրամատակարարման սխեմա

● Մայիսյան փողոցում փոխարինվել է վթարված $D=63$ մ պոլիէթիլենային ջրագծի հատվածը, ինչի արդյունքում բարելավվել է նշված թաղամասի ջրամատակարարումը:



Մայիսյան փողոցի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Թալին



Գալի փողոցի ջրամատակարարման սխեմա

● Գալի փողոցում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է $D=50$ մ $L=100$ մ չգործող վթարային ջրագիծ: Այն խցափակելու միջոցով շահագործումից հանելու շնորհիվ իննայվել է $Q=0,7$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Ախթալա

● Քաղաքը սնող $D=125$ մ ջրագծի $L=24$ մ վթարված հատվածը փոխարինելու շնորհիվ իննայվել է $Q=10$ լ/վ ջրաքանակ:



Ախթալա քաղաքի ջրամատակարարման սխեմա

Ներքին Գետաշեն համայնք

● Համայնքի Ներքին Դեմեր թաղամասի ջրամատակարարումն իրականացվում էր դեռևս 1960-70-ական թթ-ին կառուցված մետաղական ջրագծով, որը երկարատև շահագործման և ակտիվ գրունտների ազդեցությամբ ենթարկվել էր կոռոզիայի և գտնվում էր լիովին քայքայված վիճակում: Խողովակաշարի L=800մ հատվածի տարբեր մասերում առկա էին բազմաթիվ վթարներ: Այդ իսկ պատճառով առաջացել էր մոտ 10-12լ/վ ջրակորուստ: Խնդրի կարգավորման նպատակով իրականացվել են ջրագծի փոխարինման աշխատանքներ: Շահագործումից հանվել է D=50-100մմ L=800մ մետաղական ջրագիծ, որի փոխարեն կառուցվել է D=20-63մմ L=500մ պոլիէթիլենային ջրագիծ: Տեղադրվել են նոր ջրաչափեր իրենց ջրաչափական պոլիմերային հորերով: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ թաղամասն ապահովվել է շարունակական ջրամատակարարմամբ, վերացվել է ջրակորուստը, կրճատվել են շահագործման ծախսերը:



Սարատովկա համայնք




● Համայնքում կառուցվել է D=40մմ L=500մ և D=50մմ L=30մ պոլիէթիլենային ջրագիծ, ինչի արդյունքում բարելավվել է Սարատովկայի ջրամատակարարումը, վերացել են հաճախակի կրկնվող վթարները, ցանցը դարձել է կառավարելի, ինչպես նաև խնայվել է Q=4լ/վ ջրաքանակ:

Սարատովկա համայնքի ջրամատակարարման սխեմա

Վարդաբլուր համայնք

● Համայնքի վթարային ջրագծերը նորով փոխարինելու նպատակով շահագործումից հանվել են D=50մմ L=160մ, D=80մմ L=60մ, D=80մմ L=10մ և D=80մմ L=55մ վթարված ջրագծերը: Փոխարենը կառուցվել են նոր պոլիէթիլենային ջրագծեր: Իրականացված աշխատանքների շնորհիվ խնայվել է Q=6լ/վ ջրաքանակ, բարելավվել նշված համայնքի ջրամատակարարումը և վերացել են հաճախակի կրկնվող վթարները:



Վարդաբլուր համայնքի ջրամատակարարման սխեմա

Ախուրյան համայնք

● Ախուրյան համայնքի Ջրաշինարարների փողոցով անցնող $D=600$ մմ ջրագծից անջատվել է $D=100$ մմ $L=65$ մ վթարային ջրագիծ, արդյունքում խնայվել է $Q=6$ լ/վ ջրաքանակ:



Ջրաշինարարների փողոցի ջրամատակարարման սխեմա

Թորոսգյուղ համայնք



● Թորոսգյուղ համայնքի վթարային վիճակում գտնվող $D=100$ մմ $L=30$ մ ջրագիծը հանվել է շահագործումից, իսկ դրա փոխարեն կառուցվել է $D=50$ մմ $L=30$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Արդյունքում խնայվել է $Q=0.9$ լ/վ ջրաքանակ, բարձրացել ցանցում ջրի ճնշումը և վերացել են հաճախակի կրկնվող վթարները:

Թորոսգյուղի I և II փողոցների ջրամատակարարման սխեմա

Դարակերտ համայնք

● Միրզոյան փողոցը սնող ջրագիծը գտնվում էր խիստ քայքայված և կոռոզիայի ենթարկված վիճակում, ինչը պարբերաբար հանգեցնում էր վթարների և ջրակորստի: Խնդրի լուծման նպատակով իրականացվել են ջրագծի փոխարինման աշխատանքներ:



Նախկին $D=100$ մմ թուջե ջրագծի $L=300$ մ հատվածը փոխարինվել է նոր $D=110$ մմ պոլիէթիլենային խողովակով, իսկ $D=80$ մմ մետաղական ջրագծի $L=600$ մ հատվածը $D=75$ մմ պոլիէթիլենային խողովակով: Կատարվել է թվով 48 հասցեների միացում $D=20$ մմ պոլիէթիլենային խողովակներով: Սահմանազատման կետում տեղադրվել են թվով 48 ջրաչափական դիտահորեր և նույնքան $D=15$ մմ նոր ջրաչափեր:

Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է վերոնշյալ ջրագծից օգտվող բաժանորդների ջրամատակարարումը, կանխվել են հնարավոր վթարները, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը:

Նոր Կյուրի համայնք

● Համայնքում իրականացված վթարադրոնողական աշխատանքների շրջանակներում $D=20$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է խցափակման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում տնտեսվել է մոտ 1լ/վ ջրաքանակ:



Մրգավետ համայնք

● Օրբելի փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում D=90մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 2 վթար, խնայվել է մոտ 4լ/վ ջրաքանակ:

Միսյան համայնք

● Համայնքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Գայի և Չարենցի փողոցներում, համապատասխանաբար՝ D=50մմ և D=80մմ ջրագծերի վրա հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար, որի արդյունքում ընդհանուր առմամբ խնայվել է մոտ 3լ/վ ջրաքանակ:

Նորաշեն համայնք

● Սարյան փողոցում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում D=160մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է վթար, որի արդյունքում խնայվել է 1լ/վ ջրաքանակ:



Ներքին Դվին համայնք

● Չարենցի և Գայի փողոցներում D=50-63մմ ջրագծի վրա հայտնաբերվել և գողման ու կցամասերի տեղադրման միջոցով վերացվել է թվով 4 վթար, որի արդյունքում ընդհանուր առմամբ խնայվել է մոտ 4լ/վ ջրաքանակ:




Չոդ համայնք

● Համայնքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում D=100մմ ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 1.5լ/վ ջրաքանակ:

Բաղրամյան համայնք

● Իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Երիտասարդական փողոցի N:2 և N:6 տների մոտ հայտնաբերվել և վերացվել է թվով 3 վթար, որի արդյունքում խնայվել է մոտ 5.5լ/վ ջրաքանակ:



Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից կատարված աշխատանքները աղյուսակային տեսքով:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը

<i>Կատարված աշխատանքները</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Չափում հոսքաչափով	տեղ	1157
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	26980
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	17920
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	10560
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	69
Շահագործումից հանված ջրագիծ	մ	11076.5
Կառուցված ջրագիծ	մ	7199.4
Կառուցված կոյուղագիծ	մ	501.7
Վերացված գաղտնի վթարներ	հատ	70
Փոխարինված փական	հատ	297
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	520
Մաքրված դիտահոր	հատ	4527
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	157.5
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	1839
Ջրահեռացման ցանցում	հատ	4146
Պոմպակայաններում	հատ	158
Մաքրված անձրևընդունիչ	հատ	525

Օգոստոս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

h/h	Տեղամաս	Տեղի ունեցած վթարների քանակը		
		Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
1	Արաբկիր	3	53	0
2	Զեյթուն	2	44	0
3	Մաշտոց	0	40	0
4	Շահումյան	3	51	0
5	Ալավերդի	6	25	0
6	Բերդ	15	4	0
7	Նոյեմբերյան	36	6	0
8	Իջևան	13	21	0
9	Ստեփանավան	10	22	0
10	Տաշիր	16	2	0
11	Ապարան	8	9	0
12	Լոռի	55	67	0
13	Շիրակ	70	104	0
14	Արթիկ	52	34	0
15	Սպիտակ	7	24	0
16	Թալին	2	8	0
17	Աշոցք	8	20	0
18	Էջմիածին	39	33	0
19	Աշտարակ	6	10	0
20	Հրազդան	13	6	0
21	Չարենցավան	6	13	0
22	Աբովյան	2	5	0
23	Կենտրոն	3	72	10
24	Հյուսիս	3	34	50
25	Հարավ	0	85	4
26	Էրեբունի	4	65	14
27	Արմավիր	37	35	28
28	Արտաշատ	65	18	32
29	Արարատ	9	32	25
30	Մասիս	78	28	13
31	Գավառ	45	8	23
32	Սևան	7	14	43
33	Սարտունի	0	17	0
34	Վարդենիս	0	7	6
35	Ճամբարակ	2	1	2
36	Դիլիջան	10	24	31
37	Վայք	7	3	16
38	Եղեգնաձոր	29	14	16
39	Զեյրուկ	1	8	6
40	Սիսիան	19	12	17
41	Գորիս	10	9	14
42	Կապան	17	23	20
43	Սեղրի	10	1	5
	Ընդամենը	728	1111	375



1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել տարբեր տրամաչափի ջրաչափեր:


Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
ՏՏեղադրված	164	35	10	9	5	5	1	1	0	230
Փոխարինված	107	46	6	11	5	12	0	2	2	191
Տեղափոխված	16	3	2	0	0	1	0	0	0	22
Տեխ. Ակտ	41	24	6	1	0	2	1	0	2	77
Ընդամենը	328	108	24	21	10	20	2	3	4	520

1.3. Ջրահեռացման համակարգ

Օգոստոս ամսվա ընթացքում Տարածաշրջանների տնօրինությունների կողմից ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև աղյուսակում.

Աշխատանքների հակիրճ նկարագիրը				
h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում հատ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում հատ
1	Արաբկիր	0	82	16
2	Մաշտոց	2055	220	12
3	Շահումյան	885	99	10.7
4	Զեյթուն	885	333	42
5	Ալավերդի	1610	87	0
6	Ապարան	0	27	0
7	Աշոցք	400	9	44
8	Սպիտակ	110	19	0
9	Բերդ	180	9	0
10	Ստեփանավան	1595	33	120
11	Արթիկ	0	105	0
12	Լոռի	38110	180	0
13	Նոյեմբերյան	43	19	0
14	Տաշիր	264	9	36
15	Թալին	0	16	0
16	Շիրակ	650	632	35
17	Իջևան	60	54	9
18	Էջմիածին	0	110	0
19	Հրազդան	1230	107	0
20	Զարենցավան	775	74	0
21	Աշտարակ	2280	18	0
22	Աբովյան	2100	82	14
23	Կենտրոն	1485	281	0

<i>h/h</i>	<i>Տեղամասի անվանումը</i>	<i>Կոյուղագծերի լվացում</i>	<i>Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում</i>	<i>Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում</i>
24	Հյուսիս	4405	286	30
25	Հարավ	650	364	12
26	Էրեբունի	926	186	0
27	Արմավիր	2612	87	0
28	Արտաշատ	3291	92	0
29	Արարատ	95	60	0
30	Մասիս	1430	47	0
31	Գավառ	300	32	0
32	Սևան	4295	99	113
33	Մարտունի	1704	18	0
34	Վարդենիս	300	12	0
35	Ճամբարակ	0	13	0
36	Դիլիջան	1185	54	0
37	Վայք	570	18	0
38	Եղեգնաձոր	56	7	0
39	Զերմուկ	0	25	0
40	Սիսիան	230	97	0
41	Գորիս	6	35	12
42	Կապան	95	63	0
43	Մեղրի	0	27	0
	Ընդամենը	76867	4227	501.7



1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

- Գավառի կոյուղու պոմպակայանում՝ ընդունիչ հորի մեջ, պոկվել էր մետաղական զամբյուղն իր հենարանով, որի վերանորոգմանը խնդիր էր առաջացնում կոյուղաջրի անդադար հոսքը: Խնդրի լուծման համար կոյուղագիծն արհեստականորեն խցանվեց և հիմնովին վերանորոգվեց զամբյուղի հենարանը:


- Վարդենիսի կոյուղու պոմպակայանում պոմպերը դուրս են բերվել հորից, ստուգվել և ետ տեղադրվել: Ստուգվել են նաև էլեկտրական մասերը, որից պարզ է դարձել, որ լողանային անջատիչները, որոնք ծառայում են պոմպերի հավելյալ պաշտպանության համար, չեն աշխատում: Անսարք լողանային անջատիչները փոխարինվել են նորով:

- Բոլոր ԿՄԿ-ներից առաջացած տիղմը կուտակվում է Մարտունու ԿՄԿ-ի տարածքում, և տիղմահրապարակի բացակայության արդյունքում առաջացել էին տիղմի անհամաչափ թմբեր: Խնդիրը կարգավորելու նպատակով պատրաստվել է տիղմի կուտակման նոր հրապարակ: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե՛ էլեկտրական, թե՛ մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աշխատանքների հակիրճ նկարագիրը

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	Ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	-	70 023	19.8
2	Ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	-	113 842	25.2
3	Ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	-	172 562	7.2
4	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	-	92 377	18.2
5	Ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	-	143 143	10
6	Ք. Սևան	«Սևանի» N:3 պ/կ	19 646	-	-
7	Ք. Սևան	«Սևանի» N:5 պ/կ	11 893	-	-
8	Ք. Գավառ	«Գավառ» պ/կ	8 800	-	-
9	Ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	21 600	-	-
10	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	6 667	-	-




1.5. Էներգոհամակարգ

Հաշվետու ժամանակահատվածում Տարածաշրջանների Տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում.

h/h	Հասցեն	Աշխատանքների նկարագիրը
1	Կոմիտասի 48ա	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, էլ. պաշտպանիչ ռելեի նորոգում 1 հատ, փոխվել է 1 թողարկիչ
2	Կոմիտասի 42 - 44	Պոմպի աշխատանքի կարգավորում
3	Ադոնցի 3	Էլ. սարքերի գնում կարգավորում
4	Ղափանցյան պոմպակայան	Պոմպի աշխատանքի կարգավորում
5	Հանբարձումյան 47շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
6	Ա. Խաչատրյանի 1 - 88	ցածր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, փականի նորոգում տր=0 մմ, 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ
7	Հակոբյան 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
8	Հակոբյան 7, 9	Պոմպի աշխատանքի կարգավորում
9	Վաղարշյան 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
10	Համբարձումյան 97շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
11	Ավետիսյան 67շ.	Պոմպի աշխատանքի կարգավորում
12	ք.Եղվարդ Սումգայիթ թաղ.	Էլ. սարքերի գնում կարգավորում
13	Ն.Դուման 1շ	Պոմպի աշխատանքի կարգավորում
14	Ղափանցյան 0 - 43/ 8	Պոմպի աշխատանքի կարգավորում
15	Մամիկոնյանց 62	Էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում 1 հատ, էլ. ավտոմատ անջատիչի կարգավորում 1 հատ, էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, 1h լիսեռ
16	Հ.Էմին 82	Պոմպի աշխատանքի կարգավորում
17	Արաբկիր 19 փ. 4 - 66	Պոմպի աշխատանքի կարգավորում
18	Տիգրանյան 7	Պոմպի աշխատանքի կարգավորում
19	Փափազյան 11	Պոմպի աշխատանքի կարգավորում
20	Համբարձումյան 18	Պոմպի աշխատանքի կարգավորում
21	Ա.Սերոբ 11/2	Պոմպի աշխատանքի կարգավորում
22	Ադոնցի 7/1 - 12	շարժիչի փոխարինում 1 հատ, շարունակելի
23	Թբիլիսյան խճ. 7 - 54	Պոմպի աշխատանքի կարգավորում
24	Կոմիտասի 56 - 132	Էլ. թողարկիչի նորոգում 2 հատ
25	Ադոնց 7/1շ	Էլ. սարքերի գնում կարգավորում, 2h առանցքակալ, 2h բանվորական անիվի կաղապար, 1h վերանորոգման հավաքածու, պոմպի շարժիչի վերանորոգում
26	Ն.Տիգրանյան 7շ	Էլ. սարքերի գնում կարգավորում, 2h թողարկիչ, 1h ցածր ճնշման ռելե
27	Ն.Դուման 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
28	Բարբյուս 63	Պոմպի աշխատանքի կարգավորում
29	Համբարձումյան 47	Էլ. սարքերի գնում կարգավորում, 1h խցուկ, 1h ֆազի բացակայության ռելե
30	Բաղրամյան 70	Պոմպի աշխատանքի կարգավորում
31	Խաչատրյան 23	Էլ. սարքերի գնում կարգավորում, 1h վերանորոգման հավաքածու, 1h լիսեռ, բաքի միացման դետալներ
32	Նոր-Գեղի Բանավան	Էլ. սարքերի գնում կարգավորում
33	Ղափանցյան փ	պոմպի աշխատանքի գնում կարգավորում, փոշվել է միացման դետալներ պլաստիկ, եռակցման աշխ. (փաստված դետալների վերականգնում)

h/h	Պոմպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
34	Մամիկոնյանց 23 - 44	Պոմպի աշխատանքի կարգավորում
35	Հակոբյան 1 - 91	Պոմպի աշխատանքի կարգավորում
36	Կոմիտասի 2 - 11	Պոմպի աշխատանքի կարգավորում
37	Կոմիտասի 8	Պոմպի աշխատանքի կարգավորում
38	Հակոբյան 12	Պոմպի աշխատանքի կարգավորում
39	Հ.Էմին 5	Պոմպի աշխատանքի կարգավորում
40	Վրացական 6	Պոմպի աշխատանքի կարգավորում
41	Ա.Խաչատրյան 6	Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, 1h վերանորոգման հավաքածու
42	Վ. Համբարձումյան 82	Պոմպի աշխատանքի կարգավորում
43	Վ. Համբարձումյան 972	Պոմպի աշխատանքի կարգավորում
44	Վ. Համբարձումյան 182	Պոմպի աշխատանքի կարգավորում
45	Վ.Համբարձումյանի 47 - 48	Պոմպի աշխատանքի կարգավորում
46	Արթուրի 90	Էլ. սարքերի զննում կարգավորում
47	Քանաքեռ ՀԷԿ	Էլ. սարքերի զննում կարգավորում
48	Վահր.Փափազյանի 6/2 - 9	Պոմպի աշխատանքի կարգավորում
49	Գյուլբենկյանի 34/1 - 38	Պոմպի աշխատանքի կարգավորում
50	Կոմիտասի 46 - 17	Պոմպի աշխատանքի կարգավորում
51	Երզնկյան 2,4	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, պոմպի վերանորոգում 1 հատ, 2h առանցքակալ, 1h վերանորոգման հավաքածու
52	Քանաքեռ ՀԷԿ	Պոմպի աշխատանքի կարգավորում
53	Կոմիտաս 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
54	Պարոնյան 28	Պոմպի աշխատանքի կարգավորում
55	Թբիլիսյան խճ. 1 - 118	պոմպի աշխատանքի զննում կարգավորում, 1h մոնտեժոր, 1h ավտոմատիկայի կառավարիչ, 1h ֆազի բացակայության ռելե
56	Բաբայան 34	Պոմպի աշխատանքի կարգավորում
57	Կոմիտաս 1	Պոմպի աշխատանքի կարգավորում
58	Խաչատրյան 26	պոմպի վերանորոգում 1 հատ, 1h թերմոռելե, 1h լիսեռ, 1h վերանորոգման հավաքածու
59	Մամիկոնյանց 29	պոմպի վերանորոգում 1 հատ, 2h առանցքակալ, 1h վերանորոգման հավաքածու
60	Ղափանցյան 53	Պոմպի աշխատանքի կարգավորում
61	Մամիկոնյանց 27 - 74	շարժիչի փոխարինում 1 հատ, փոխվել է ճնշման բաքի պլաստիկ միացման դետալներ 200-300լ մեմբրան
62	Բաբայան 34	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, 1h ֆազի բացակայության ռելե
63	Աղ.Սերոբ 11/3	պոմպի վերանորոգում 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, 1h մոնտեժոր, ռետինե խողովակի միացում դետալներով
64	Ահարոնյան 2/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
65	Ադրբայժան Սերոբ 10	Պոմպի աշխատանքի կարգավորում
66	Ազատության 6	Պոմպի աշխատանքի կարգավորում
67	Ռուբինյանց 105	Պոմպի աշխատանքի կարգավորում
68	Սարկավազ 72	Պոմպի աշխատանքի կարգավորում
69	Ազատության 12/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
70	Թբիլիսյան խճ. 1,2	Էլ. սարքերի զննում կարգավորում
71	Ռայնիսի 105-56	Պոմպի աշխատանքի կարգավորում
72	Ռայնիսի 105	Էլ. սարքերի զննում կարգավորում, 1h ավտոմատիկայի կառավարիչ, 1h ցածր ճնշման ռելե
73	Դրոյի 14/1	Պոմպի աշխատանքի կարգավորում
74	Դրոյի 24	Պոմպի աշխատանքի կարգավորում
75	Ահարոնյան 5	Պոմպի աշխատանքի կարգավորում
76	Էստոնական 12/1 - 129	պոմպի աշխատանքի զննում կարգավորում, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, շարունակելի
77	Առաքելյան 702.	Պոմպի աշխատանքի կարգավորում
78	Սիսակյան 222.	Պոմպի աշխատանքի կարգավորում
79	Շինարարներ 15/1Շ	պոմպի աշխատանքի զննում կարգավորում, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, 1h պոմպի խձուկ
80	Մարգարյան 7	Պոմպի աշխատանքի կարգավորում
81	գ. Զովունի 9 փ 125 2	պոմպի վերանորոգում 1 հատ, շարժիչի փոխարինում 1 հատ, 1լիսեռ, 1բանվորական անիվ
82	Զովունի 9 փ 1252	պոմպի վերանորոգում 1 հատ, 2հատ առանցքակալի փոխարինում
83	Աբելյան 17	Էլ. թողարկիչի նորոգում 1 հատ, Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում 1 հատ, 1h խձուկ
84	Զովունի 9 փ 125	Պոմպի աշխատանքի կարգավորում
85	Հալաբյան 38 - 24, Մարգարյան 7	պոմպի աշխատանքի զննում կարգավորում, փոխվել է 1հատ ջրի պոմպ (CR15-06)1h թողարկիչ,պոպի միացման պլաստիկ դետալներ

h/h	Պումպակայանների հասցեն	Աշխատանքների հակիրճ նկարագիրը
86	Սիսակյան 16	Պումպի աշխատանքի կարգավորում
87	Առաքելյան 66 - 34	Պումպի աշխատանքի կարգավորում
88	Բաշինջաղյան 1 նրբ 1,2	Պումպի աշխատանքի կարգավորում
89	Բաշինջաղյան 13,15	Պումպի աշխատանքի կարգավորում
90	Առաքելյան 66	Էլ. սարքերի գննում կարգավորում, 1h վերանորոգման հավաքածու, 2h առանցքակալ պոմպի շարժիչի վերանորոգում
91	Աշտարակի խճ	Էլ. սարքերի գննում կարգավորում, հոսքաչափի էլ.մալուխի վերանորոգում
92	Էստոնական 12/1 - 120	Պումպի աշխատանքի կարգավորում
93	մ.Կոտայք ք.Արովյան /տեղամաս/	Էլ. սարքերի գննում կարգավորում
94	մ.Արմավիր ք.Էջմիածին Շահումյան 50	բարձր ճնշման ռելեի նորոգում 2 հատ, 1 պոմպի խցուկ
95	ք. Էջմիածին, գ. Այգեկ 9 փ. 12 տ.	Էլ. սարքերի գննում կարգավորում, 2 առանցքակալ, 1 ժամային ռելե
96	Բ-1 թաղ 972	Պումպի աշխատանքի կարգավորում
97	Բ-1 թաղ 972	Պումպի աշխատանքի կարգավորում
98	Լենինգրադյան 31/1	Էլ. սարքերի գննում կարգավորում, 1h ցածր ճնշման ռելե, 1h թողարկիչ
99	Լենինգրադյան 31/6 և 31/8 22.	Էլ. սարքերի գննում կարգավորում, 1h ավտոմատ կառավարիչ
100	Սեբաստիա 23	Էլ. սարքերի գննում կարգավորում, փոխվել է ինվերտորային համակարգը և թվային տվիչը
101	Բաբաջանյան փ կամուրջի մոտ	Էլ. պաշտպանիչ ռելեի նորոգում 1 հատ, 1h ֆազի բացակայության ռելե
102	Բաբաջանյան փ կամուրջի մոտ	Էլ. սարքերի գննում կարգավորում
103	գ. Անդրանիկի թաղ. 10/1 - 52	փականի տեղադրում տր=20 մմ, 1 հատ, բարձր ճնշման ռելեի նորոգում 1 հատ, 1հատ մանուևտրի փոխում, 2հատ ապահովիչի կափարիչ:
104	Խորենացի փողոց	Հոսքաչափի զննում և մալուխի նորոգում
105	Սարի Թաղի ՕԿՁ	ՕԿՁ սնող էլ մալուխի զննում և հատվածների նորոգում
106	Արցախի 8/3	Վնասված էլ. մալուխի նորոգում
107	Իսրայելյան 37	Հոսանքի բացակայության կարգավորում
108	Ն. Շենգավիթ 11 փ. 37/3	Ջրի ճնշումների ստուգում և կարգավորում
109	Արշակունյաց 30	Թողարկիչի աշխատանքի կարգավորում
110	Արցախի 24	Պումպի մուտքի ջրագծի D=50մմ խափանված փականի նորոգում
111	Էրեբունի 23	Ավտոմատ անջատիչի նորոգում
112	Արցախի 10 ա, բ, գ	Պումպակայանում մուտքի D=80մմ ջրագծի վթարված մասերի նորոգում էլ. եռակցումով
113	Արցախի 20/1	D=80մմ փականից ջրի արտահոսքի կանխում
114	Արցախի 6	Վնասված էլ. մալուխի նորոգում
115	Նար-Դոս 1	Ավտոմատ անջատիչների և թողարկիչի աշխատանքի կարգավորում
116	Վրացյան 71, 71/1	Ենթակայանից վթարված մալուխի նորոգում
117	Աբովյան պուրակ ՕԿՁ	Կատարվել է հաղորդալարերի և ավտոմատ անջատիչների աշխատանքի կարգավորում
118	Նուբարաշեն 6/1	Հետադարձ փականի ապամոնտաժում և մոնտաժում



1.6. Մեքենա-մեխանիզմներ

Օգոստոս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

Շահագործվող մեքենա-մեխանիզմների պատշաճ շահագործման համար նորոգվել են թվով 12 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները: Թվով 4 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով: Վերանորոգվել են թվով 14 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուփր լարեր, ուղեններ, վառոցքի բանալիներ: Թվով 8 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները: Նորոգվել է թվով 5 մեքենաների փոխանցման տուփերը, փոխարինվել են ստամբանիփներ, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Նորոգվել են թվով 12 մեքենաների արգելակման համակարգերը, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները: Թվով 22 անվաղողեր նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել են: Թվով 6 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ուետինե խողովակներ:



Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուումի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ: Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկներ, ստամբանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 9 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 4 մեքենաների վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուկիներ:

Փոխարինվել են թվով 64 մեքենամեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր և գտիչներ: Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 4 մեքենամեխանիզմների վրա: Մնուցման և գազի համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են ժիգյորներ, ներդիրներ, ասեղներ, բարձր ճնշման շտուցերներ, լիցքավորման հետադարձ փականներ:

Թվով 2 մեքենաների ուժեղացուցիչներ վերանորոգվել են, փոխարինվել են ստամբանիփներ, առանցքակալներ, խտաբուկեր, ներդիրներ: Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուումի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ստամբանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ: Թափքի նորոգման և ներկման աշխատանքներ են իրականացվել թվով 3 մեքենաների վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





2.1. Բաժանորդների տվյալներ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՏ-ում ներգրավվել են 183, իսկ ՄՏՍՏ-ում 127 պայմանագրային աշխատակիցներ: 01.09.2018թ. դրությամբ «Բնտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՏ-ում 229.620, իսկ ՄՏՍՏ-ում 176.086 պայմանագրեր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2018թ. հունվար-օգոստոս ամիսների ծառայություններ ստացած բաժանորդների թիվը	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	353.300	220.533	62.4
		Իրավաբանական անձ	16.467	9.087	55.2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	248.441	164.120	66.1
		Իրավաբանական անձ	9.622	6.373	66.2
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	601.741	384.653	63.9
		Իրավաբանական անձ	26.089	15.460	59.3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները օգոստոս ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	396.385	305.577	77,1
		Իրավաբանական անձ	19.890	14.523	73,0
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	313.551	203.392	64,9
		Իրավաբանական անձ	12.210	7.984	65,4
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	709.936	508.969	71,7
		Իրավաբանական անձ	32.100	22.507	70,1

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):

ԵՏՍՏ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 212 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՏ սպասարկման տարածքում՝ 84 նոր բաժանորդ:

2.2. Հասույթ


2018թ. օգոստոս ամսվա սպառման ծավալները համեմատած նախորդ ամսվա հետ զգալիորեն ավելացել են: ՄՏՍՏ սպասարկման տարածքում սպառման ծավալը նախորդ ամսվա համեմատ ավելացել է մոտ 109.0հազ.խմ-ով (կամ 2.82%-ով), իսկ ԵՏՍՏ սպասարկման տարածքում՝ մոտ 164.0հազ.խմ-ով (կամ 2.07 %-ով):

Շարունակվում է կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՏ-ի «Շենգավիթ», «Հյուսիս», «Շահումյան» և ՄՏՍՏ-ի «Լոռի», «Շիրակ» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ, ավելի զգայուն ջրաչափերով:


Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս հատուկ դիտահորերում, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունները:
 Բոլոր փոխարինված ջրաչափերը ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Օգոստոս ամսվա ընթացքում ԵՏՍՏ-ում ստուգաչափվել է 4793, իսկ ՄՏՍՏ-ում՝ 1257 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	08.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակը	որից		
				Սարքին	Անսարք	Միջամտած
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	4615	3555	752	308
2		Իրավաբանական անձ	178	110	55	13
		Ընդամենը	4793	3665	807	321
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	1097	694	306	97
2		Իրավաբանական անձ	160	97	54	9
		Ընդամենը	1257	791	360	106

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասը ունեն խնդիրներ: «Միջամտած» ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում, լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել 156.774մ3 վերահաշվարկված հասույթ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




2018թ. օգոստոս ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ ³	Փաստացի հազ.մ ³	Տարբերություն %, հազ.մ ³
Երևան	Օգոստոս	8.263	8.082	-2,19
Մարզեր		4.007	3.972	-0,88
Ընդամենը		12.270	12.054	-1,76

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



2.3. Գանձուև

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Օգոստոս ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1.401 մլն.դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 618.3 մլն.դրամ:

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	1.124.295	1.092.631	1.164.996	1.256.334	1.271.520	1.428.482	9.620.234
	Հավաքագրում	809.156	950.219	1.113.310	961.906	1.171.895	1.173.069	1.194.706	1.401.559	8.775.821
	%	70.66	83.58	99.02	88.04	100.59	93.37	93.96	98.12	91.22
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	415.475	464.364	443.557	481.998	481.998	621.594	3.865.691
	Հավաքագրում	404.088	443.632	490.015	476.166	520.132	501.615	507.621	618.309	3.961.579
	%	83.26	94.11	117.94	102.54	117.26	104.07	105.32	99.47	102.48
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	1.539.770	1.556.995	1.608.553	1.738.332	1.753.518	2.050.076	13.485.925
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	1.603.325	1.438.073	1.692.027	1.674.685	1.702.327	2.019.869	12.737.400
	%	74.41	86.67	104.13	92.36	105.19	96.34	97.08	98.53	94,45

2.4 Դեբիտորական պարտքեր

Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Օգոստոս ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 72 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 5.14մլն. դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 54 պարտքի մարման ժամանակացույց, մոտ 3.82մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափսը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

Ստորև, աղյուսակային տեսքով, ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018թ		Բավարարված		Մերժված		2017-2018թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
1903	221931206	1276	103490728	34	6165492	2561	242696527	488	41405681

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդներին հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում:


Տարածաշրջան	Պարտքը 01.09.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում մայիս ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	2.916,9	1.506,1
Բնակիչ-բաժանորդներ	1.930,2	962,1
Իրավաբանական անձեր	986,6	544,0
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	2.022,4	667,8
Բնակիչ-բաժանորդներ	1.651,2	512,8
Իրավաբանական անձեր	371,2	155,0
Ընդամենը, այդ թվում	4.939,3	2.173,9
Բնակիչ-բաժանորդներ	3.581,5	1.474,9
Իրավաբանական անձեր	1.357,8	699,0

Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չի առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:


Միաժամանակ ՄՏՍՏ մատով դեբիտորական պարտքերի մեջ ներառված են 01.09.2018թ. դրությամբ հանրապետական բյուջեից չվճարված մոտ 77.0 մլն. դրամ պարտքը, որը նախատեսվում է վճարել հաջորդ ամիսների ընթացքում:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 121.24մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)



2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.09.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	387.100	303.708	78,46	19.363	14.518	74,99
	Առանց ջրաչափի	9.285	1.869	20,13	527	5	0,95
Մարզեր	Ջրաչափով	284.055	197.600	69,56	11.800	7.979	67,62
	Առանց ջրաչափի	29.496	5.792	19,64	410	5	1,22
Ընդամենը	Ջրաչափով	671.155	501.308	74,69	31.163	22.497	72,19
	Առանց ջրաչափի	38.781	7.661	19,75	937	10	1,07

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.09.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	512.757	273.393	53,32	22.091	4.105	18,58
Մարզեր	330.880	82.203	24,84	13.958	1.749	12,53
Ընդամենը	843.637	355.596	42,15	36.049	5.854	16,24

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանուժներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2609, իսկ Մարզերում 1345 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 70 իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 236 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա: Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդամենը քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի	6,079	4,825	79.4
Սվաճյանի	1,461	1,197	81.9
Օհանովի	1,688	1,272	75.4
Զ.Անդրանիկի	1,750	864	49.4
Առնո Բարաջանյանի	7,068	3,506	49.6
Իսակովի	231	55	23.8
Ջրվեժ Մայակ թաղ.	1,891	1,458	77.1
Ջրվեժ Բանավան	1,399	1,132	80.9
5 զանգված	6,282	3,672	58.5
7 զանգված	4,615	3,116	67.5
8 զանգված	3,818	2,286	59.9
ԸՆԴԱՄԵՆԸ	36,282	23,383	64.4

«Լոռի» տեղամասում Ընկերության Վարչական և Տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիրը: Օգոստոս ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 9 հասցեներում, որտեղ առկա 2.837 ջրաչափից օգոստոսին փոխարինվել է 1.851 ջրաչափ (մոտ 65.2%):

Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Ք.Վանաձոր, Բսահակյան	661	444	67.2
Ք.Վանաձոր, Բսահակյան 1 նրբ.	243	184	75.7
Ք.Վանաձոր, Բսահակյան 2 նրբ.	116	79	68.1
Ք.Վանաձոր, Ավետիսյան	74	52	70.3
Ք.Վանաձոր, Աղայան	517	395	76.4
Ք.Վանաձոր, Պ.Սևակի	162	102	63.0
Ք.Վանաձոր, Շինարարների	356	240	67.4
Ք.Վանաձոր, Ուսանողական	251	173	68.9
Գ.Գուգարք	457	182	39.8
ԸՆԴԱՄԵՆԸ	2,837	1,851	65.2

«Լոռի» տեղամասի սպասարկման տարածքում, տարբեր հասցեներում տեղադրվել են նաև 461, իսկ «Շիրակ» տեղամասի սպասարկման տարածքում՝ 527 ջրաչափական սարք:

2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը՝ ջրագրելու իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:



Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	148	75,714	13,460,380
Մարզեր	253	98,718	16,046,856
Ընդամենը	401	174,432	29,507,236

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ






3.1. Ջրամատակարարման շարունակականություն



Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի օգոստոս ամսվա շարունակականության տվյալները՝ 98.1%, որոնք 1.0%-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:







Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)




Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 65 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 17-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.








3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում

Հաշվետու ամսվա ընթացքում Է.Էնեգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 32,409 կՎտ/ժ (6.21%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր








Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների ծախսերին ինչպես խախտումների կանխման, այդպես էլ ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:


Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 156 հասցե: Թվով 5 հասցեում կատարվել է ռելեի կարգաբերում, իսկ 2 հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ: Այդ մասին տեղեկացվել է «ՀԷՑ ՓԲԸ»-ի համապատասխան ծառայություններին թերությունները վերացնելու համար:

Հասցե	Հայտնաբերված թերություններ	Ամսական կՎտ/ժամ
Ամիրյան 15	Ռելեի կարգաբերում	372
Պուշկինի 3	Ռելեի կարգաբերում	744
Գյուլբենկյան 39ա	Շարժիչի փոխարինում	149
Մարգարյան 10թ.10շ	Ռելեի կարգաբերում	372
Լենինգրադյան 31	Ռելեի կարգաբերում	149
Մայիսյան ՕԿՁ	Հաշվիչի սխալ աշխատանքի հայտնաբերում	2700
Արգել պ/կ	Հաշվիչի սխալ աշխատանքի հայտնաբերում	2000
Ընդամենը		6486


Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացված են օգոստոս ամսվա ընթացքում էլ.էներգիայի տնտեսում ունեցող հասցեները.



● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ.էներգիայի ծախսը նվազել է 5,726կՎտ/ժ (18%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության շնորհիվ էլ. էներգիայի ծախսը նվազել է 7,004 կՎտ/ժ (16%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




Օգոստոս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 172,143 կՎտ/ժ (6,1%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 348.652 կՎտ/ժ (10.56%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլ.էներգիայի ծախսը նվազել է ամսական 574,520կՎտ/ժ կամ (7,83%)` անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասած էլ. էներգիա




3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ

- Կատարվել է Նոր Երզնկա գյուղի և Արագածոտնի մարզի Ագարակ գյուղի թվայնացում և բազայի լրացում (թվայնացումը կատարվել է հիմք ընդունելով Google Earth ծրագրում առկա տեղեկատվությունը):
- Կատարվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքների թարմացում և ճշտում, ինչպես նաև համայնքների տարանջատում` ըստ սպասարկող տեղամասերի: Թարմացված տեղեկատվության հիման վրա ստեղծվել է տվյալների բազա` հետագայում ԱՏՀ-ը տեղափոխելու և քարտեզներ ստանալու նպատակով:
- Կատարվել է Սյունիք և Վայոց Ձոր մարզերում տեղադրված ծախսաչափերի տեղադիրքերի ճշտում:
- Կատարվել է «Կենտրոն» տեղամասի կողմից (scan տարբերակ) և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված Կենտրոն վարչական շրջանի կոյուղագծերի թվայնացում GIS համակարգով: Թվայնացված կոյուղագծերի երկարությունը կազմում է 114152.983787 մ:
- Տվյալների բազայում կատարվել է Երևան քաղաքի ՕԿՁ-ների շերտի թարմացում, տպագրվել են Երևան քաղաքի ու հարակից տարածքների քարտեզներ` ՕԿՁ-ների և կարգավորիչ փականների տեղադիրքերով` A0 ձևաչափով:
- Կատարվել է «Լանջազատ-Արարատ» ջրատարի քարտեզ-սխեմայի կազմում և տպագրում A1 ձևաչափով:
- Ընթանում են պոմպակայանների շերտի թարմացման աշխատանքներ` հիմք ընդունելով Էներգովերահսկողության խմբի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև ԱՏՀ-ում առկա տվյալների բազան:
- ՏՏ-ների ինժեներների կողմից ներկայացրած ջրամատակարարման և ջրահեռացման ցանցում կատարած աշխատանքների համակարգում համապատասխան գծագրերի կազմում և մուտքագրում US համակարգ:
- «Բնտերակտիվ» համակարգում կատարվել է իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում` տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ: Հավաքագրված տեղեկատվությունը ներմուծվել է US համակարգ և փոխանցվել Առևտրային տնօրինություններին` բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով: Սկսվել են բաժանորդների տեղադիրքերի ճշտում նաև Աշտարակ քաղաքում: Կատարվել է 359 ֆիզիկական բաժանորդի և 11 իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում Երևան քաղաքում:
- Աշտարակ քաղաքում և Դպրևան, Շամիրամ, Ուջան, Ջիթանքով, Ֆանտան գյուղերում կատարված շինարարական նախագծերի արդյունքում ստացված կատարողականների տվյալները մուտքագրվել են ընդհանուր բազա GIS, Autocad ծրագրերի ձևաչափով: Դրանք ներառում են տեղեկատվություն ՕԿՁ-ների, պոմպակայանների, քլորակայանների, խորքային հորերի և մարիչ հորերի տեղադիրքերի կոորդինատների վերաբերյալ:
- «ՄԵԾ ՄԱՍՐԵՆԻ» ՍՊԸ-ի կողմից նախկինում կատարված աշխատանքների տվյալների հիման վրա կատարվել է նախկին «Հայջրմուղկոյուղու» սպասարկման տարածքի ջրատարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տեղադրում` ճիշտ աշխարհագրական դիրքով GIS, Autocad ծրագրերի ձևաչափով:
- Ջեռք է բերվել կոյուղու խողովակների, ինչպես նաև խմելու ջուր սպասարկող խողովակների վթարների վերաբերյալ տեղեկատվություն` սկսած 2017թ-ի հունվար ամսից:
- Կատարել է Երևանում տեղակայված ՕԿՁ-ների և պոմպակայանների սխեմաների թարմացում:

3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ


Հաշվետու ամսում կարգավարների խումբը «SCADA» և «LOCATOR» համակարգերի միջոցով առցանց կառավարել և հետևել է «Վեդիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում առկա պոմպային ագրեգատների անխափան աշխատանքին, ջրամբարների լցվածությանը, ճնշումային լոգերներին, ջրաչափական սարքերի աշխատանքին և բաշխիչ ցանցի ջրում առկա մսացորդային քլորի համապատասխանությանը սահմանված չափաբաժնին:

● «Շահումյան» տեղամասի տարածքում գտնվող Շերամի փողոցում տեղակայված ծախսաչափի տվյալներից պարզվել է, որ վերոնշյալ տարածքում ջրասպառման քանակությունը գրաֆիկից հետո (Ժամը 24:00-ին) ավելացել է՝ 48լ/վ-ից հասնելով 54լ/վ-ի: Վերոնշյալ տեղամասի աշխատակիցների կողմից հայտնաբերվել է վթարի ստույգ վայրը, որից հետո հայտարարվել է վթարային ջրանջատում: Վթարավերականգնողական աշխատանքների ավարտից հետո ջրաքանակը վերականգնվել է: Ստորև ներկայացված է տվյալ ջրաչափի գրաֆիկական պատկերը.




● «Արին-Բերդ» ՕԿԶ-ից դեպի Էրեբունի-Մասիվ հոսող ջրատարի վրա տեղադրված հոսքաչափից ստացված տվյալներից պարզվել էր, որ տվյալ թաղամաս հոսող ջրաքանակը 43լ/վ-ից ավելացել է հասնելով 50լ/վ: Այդ մասին տեղեկացվել է «Էրեբունի» տեղամասի համապատասխան պատասխանատուներին: Վթարը հայտնաբերվել և վերացվել է տվյալ տեղամասի աշխատակիցների կողմից:

Ստորև ներկայացված է տվյալ ջրաչափի գրաֆիկական պատկերը.



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ





4.1. Համակարգչային ցանց

Օգոստոս ամսվա ընթացքում կատարվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքները.

- Ինտեգրվել է «Microsoft LAPS» (Local Administrator Password Solution) ցանցում գործող բոլոր համակարգիչների հիմնական լոկալ ադմինիստրատորի գաղտնաբառի կառավարման համար: Այն հնարավորություն է տալիս ցանցում գործող յուրաքանչյուր համակարգչի վրա տեղադրել իր եզակի, չկրկնող գաղտնաբառը, որը համապատասխանում է նախորդ ընտրած գաղտնաբառերի քաղաքականությանը (տառերի և նիշերի քանակ, ավտոմատ փոփոխման ժամանակացույց և այլ):

Այս մոտեցումը զգալիորեն բարձրացնում է ցանցի անվտանգությունը և կասեցնում է այն վիրուսների տարածումը, որոնք գողանում և օգտագործում են լոկալ ադմինիստրատորի գաղտնաբառեր:

- Ինտեգրվել է օգտագործողների գաղտնաբառերի քաղականությունը, որը ապահովում է օգտագործողների համակարգիչների գաղտնաբառերի համապատասխանելիությունը հետևյալ պայմաններին՝

- ▶ Գաղտնաբառը պետք է պարունակի առնվազն 8 նիշ
- ▶ Գաղտնաբառը պետք է կազմված լինի մեծատառ և փոքրատառ տառերից և թվերից
- ▶ Գաղտնաբառը պետք է փոփոխվի առնվազն 3 ամիսը մեկ
- ▶ Գաղտնաբառը չպետք է կրկնի նախորդ 10 գաղտնաբառերը

- «Vjur.am» դոմենով գործող էլեկտրոնային նամակագրության համակարգի ծավալի զգալիորեն աճի և այդ աճի տեմպերի անկանխատեսելի բարձրացման պատճառով այն տեղափոխվել է նոր սերվերի վրա «LVM» տեխնոլոգիայով կառուցված հիշողության բաշխման տրամաբանությունով, թարմացրած օպերացիոն համակարգով և այլ ծրագրային ապահովումով:

- Մեկնարկել է «Veolia» Խմբի «Malware Prevention» փաթեթի թեստավորման ակտիվ փուլը: Այն կիրառվել է տարբեր պատահական, համակարգիչների վրա և այդ կիրառման արդյունքում ստացված տեղեկատվությունը վերլուծվում է հնարավոր խնդիրների նախնական շտկման նպատակով:

- Մեկնարկել է «Veolia» Խմբի «VESTA» ծրագրային ապահովման ինտեգրման գործընթացը:

- Անցկացվել է հանդիպում «SATAWAD» (Secure Any Time Anywhere Any Device) պրոյեկտի ընթացքի և անհրաժեշտ քայլերի իրականացման քննարկման նպատակով:

4.2 Ինտերակտիվ համակարգ

- Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և թարմացումներ «Ինտերակտիվ» և փաստաթղթաշրջանառության համակարգերում:

- Մի շարք հաշվետվություններ են տրամադրվել ՋՏՊ կոմիտեին և ՀՄԿՀ-ին և ընկերության այլ ստորաբաժանումներին:

4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ


Հաշվետու ամսվա ընթացքում հայտ է ուղարկվել «Յուքոմ» ՍՊԸ-ին՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների կողմից դեպի հեռախոսակենտրոն (080000185 հեռախոսահամարով) կատարած զանգերն անվճար դարձնելու նպատակով, ինչպես նաև տրվել է հայտ «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ին, մարզերում ամրակցված հեռախոսահամարներից դեպի 1-85 թեժ գիծ հասանելիություն ապահովելու համար:

4.4. Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար համար ձեռք են բերվել թվով 16 հատ նորագույն համակարգիչներ:

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Օգոստոսի երկու ամենակարևոր խնդիրներից առաջինը, որը դրվել էր Հանրային կապերի ծառայության առաջ՝ 2019թ. սակագները հանրության հնարավորինս սահուն ու ընդունելի տարբերակով ներկայացնելն էր, որպեսզի նվազագույնի հասցվեր սպառողների դժգոհությունը:



Խնդիրն առաջ էր եկել 2017թ. փորձը հաշվի առնելով, երբ մասամբ հանրության ոչ բավարար իրազեկվածության, մասամբ էլ Ընկերության ոչ բավարար ակտիվության պատճառով «Վեոլիա Ջրի» օրենսդրությամբ սահմանված նախաձեռնությունը ստացել էր բացասական արձագանք, որն ազդել էր նրա հեղինակության վրա:

Այս անգամ որոշվել էր մինչև սակագների ճշգրտման հայտը ՀՀ ՀԾԿՀ ներկայացնելը նախապատրաստական աշխատանքներ իրականացնել: Դրա համար ՀԿԾ-ն նախ հրապարակել էր համապատասխան հայտարարություն «Առավոտ» և «Ժողովուրդ» օրաթերթերում, հետո՝ պատրաստել էր բավական ծավալուն պարզաբանում՝ ՋԼՄ-ների համար, որը օգտագործվել էր հետագա աշխատանքում: Իսկ հայտը նշված Հանձնաժողով ներկայացնելու նախօրեին Պարզաբանումը՝ հարց ու պատասխանի ձևով /վերնագիր «ՋՐԱՄՍԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ. ԱՐԴԱՐԱՑԻ ՈՒ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ»/ հրապարակվել էր «Առավոտ» օրաթերթում, Ընկերության ֆեյսբուքյան էջում և մեծ



արձագանք էր ստացել: Դրա շնորհիվ հաջողվել էր հստակություն մտցնել խնդրում և մեղմացնել իրավիճակը: Իսկ որ ամենակարևորն է՝ ստեղծվել էր լիարժեք հիմք հանրության ու սպառողների հետ տարվող բացատրական աշխատանքում դեկավարվելու համար:

Հանրության բացասական արձագանքը նվազագույնի հասցնելու նպատակով, սահմանափակվել էին շփումները խնդրին ոչ ծանոթ կամ ի սկզբանե քննադատաբար վերաբերող լրագրողների հետ, փոխարենը պատրաստակամություն էր ցուցաբերվել ընդունել ու օգնել ճիշտ ներկայացնել իրավիճակը սպառողներին կարևորագույն ՋԼՄ-ներին կամ խնդրին ծանոթ լրագրողներին:

Այստեղ ամենակարևորը Հանրային հեռուստաալիքի անդրադարձն էր, որը դրանից քանի օր առաջ բացասական շեշտադրությամբ հայտարարել էր «Վեոլիա Ջրի» մտադրության մասին, և շատ կարևոր էր տվյալ հեռուստաալիքի դիրքորոշումը փոխել: Այս նպատակով լրագրողին պարզաբանումներ էր տվել ՀԿԾ պետ Մուրադ Սարգսյանը: Հանրային հեռուստաալիքի մեկնաբանությունը ստացվել էր գործնական ու կառուցողական:



Սակայն թեման մնաց հրատապ, քանի որ դրան հաջորդած իրադարձությունը ուղղակի կապ ուներ սակագների բարձրացման հետ: Խոսքը երկրորդ կարևորագույն խնդրի՝ «Վեոլիա Ջրի» մի շարք աշխատակիցների ՀՀ ոստկանության կողմից ներկայացված կոռուպցիոն մեղադրանքի մասին է, որը հիվանդագին հետաքրքրություն էր առաջացրել հանրության շրջանում և տարատեսակ հարցերի պատճառ հանդիսացել: Այստեղ ևս ՀԿԾ-ն՝ Ընկերության տնօրինության ցուցումով, որդեգրել էր գուսպ և



կառուցողական մոտեցում: Այն է. Վեոլիա Ջուրը բաց է ստուգումների համար և չի ընդունում որևէ մեղադրանք: Այս կապակցությամբ տրվել են պարզաբանումներ մի քանի ՋԼՄ-ների, այդ թվում նույն Հանրային հեռուստա-ալիքին, իսկ մյուսներին ներկայացվել էր «Վեոլիա Ջրի» պաշտոնական հայտարարությունը: Օգոստոս ամսին հրավիրված մամուլի ասուլիսում գլխավոր տնօրեն՝ Գրիստիան Լըֆեն ներկայացրել էր Ընկերության պաշտոնական տեսակետը ու պատասխանել էր հանրությանը հետաքրքրող բոլոր հարցերին:

Օգոստոսին չի մոռացվել նաև Ընկերության ընթացիկ խնդիրների ու իրականացվող աշխատանքների լուսաբանումը: Այսպես, 3 հեռուստաալիք անդրադարձել էին Սրարատի մարզում նոր ՕԿՋ-ի կառուցմանը, որին մասնակցել և հարցազրույց էր տվել մարզպետը, նույն օրը 2 հեռուստաալիք օպերատիվորեն լուսաբանել էին խոշոր ջրատարի վթարի վերացման աշխատանքները, որը պատճառ էր հանդիսացել էջմիածնում տևական ջրանջատման, իսկ օրեր անց Սևանի ջրամատակարարման բարելավման մասին ռեպորտաժ էին պատրաստել ընդ որում քաղաքապետի մասնակցությամբ, 3 հեռուստաալիք: Հարկ է նշել նաև Վանաձորի կոմերցիոն ծառայության պետի նախաձեռնությունը, որի շնորհիվ քաղաքային «Լոռի» հեռուստաալիքով լուսաբանվել էր ջրաչափերի փոխարինման ծրագրի ընթացքը:



Օգոստոս ամսին որոշակի ակտիվացել էր՝ հրատապ հրապարակումների շնորհիվ նաև Ընկերության ֆեյսբուքյան էջը: Խոսքը մասնավորապես ջրի որակի վերաբերյալ բնակչի բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի կարճվելն էր ապացույցների բացակայության պատճառով, «Վեոլիա Ջրի» պաշտոնական դիմումը բաժանորդներին՝ Ընկերության աշխատակիցներին ներկայացված կոռուպցիոն մեղադրանքի առթիվ, Գորիսը սնուցող մայրուղային ջրատարի ջրանջատման փաստը տեղի բնակիչների մեղքով, և մի շարք այլ թեմաներ:

Հաշվետու ժամանակահատվածի վերջին իրադարձությունը ՀԿԾ-ի մշակած Հաղորդակցության ծրագրի իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփումն էր, որի շնորհիվ ընտրվել էր Գովազդային «Deem Communication» Ընկերությունը, որը և սեպտեմբերից պետք է ձեռնամուխ լինի «Վեոլիա Ջրի» առաջադրանքների կատարմանը:

**ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**





6.1 Փաստաթղթերի մշակում

- ՈԱԱ ծառայությունը, ելնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներից, հաշվետու ամսվա ընթացքում՝ համագործակցելով «Դավր տեխնիկական անվտանգության ծառայություն» ՍՊԸ-ի փորձագետների հետ լրամշակել է Ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող թվով 32 ամբարձիչ սարքավորումների (բազմաճախարակ/կամրջակային կրունկ) տեխնիկական անվտանգության վկայագրերի V0.2 տարբերակը և ներկայացրել է Ընկերության Գլխավոր Տնօրենի և Գլխավոր գործադիր տնօրենի համաձայնեցմանը/հաստատմանը: Ներկայումս վերոգրյալ փաստաթղթերի համար իրականացվում են փորձաքննության աշխատանքներ:

- ՈԱԱ ծառայությունը 21/08/2018 թվականին «ԴԱՄԻ» Տեխնիկական անվտանգության ծառայություն ՍՊԸ-ի կուրերցիոն տնօրեն Խ.Գրիգորյանի հետ մասնակցել է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնտեսական, տեղեկատվության և վերլուծության բաժնի ներկայացուցիչների մոտ հրավիրված աշխատանքային հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից փաստացի շահագործվող ԱՎՕ հանդիսացող Օբյեկտների գրանցման հետ կապված խնդիրները:

6.2 Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ



- Ղեկավարվելով ՀՀ Արարատի մարզպետի 23/01/2018 թվականի N 07 որոշմամբ հաստատված ՀՀ Արարատի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանի պահանջներով՝ 2018 թվականի օգոստոսի 16-ին Ընկերության «Արտաշատ» տեղամասի շահագործման պատասխանատուները «Արևելք» ՏՏ Տնօրենի և ՈԱԱ ծառայության համակարգմամբ իրականացրել է հատուկ տակտիկական ուսումնասիրություն (ՀՏՈւ), որի շրջանակներում ՈԱԱ ծառայությունը «Արևելք» ՏՏ ղեկավար անձնակազմի հետ համատեղ մշակել և հաստատել է ՀՏՈւ-ի անցկացման վերաբերյալ ներքին իրավական ակտը, անցկացման պլանը, օրացուցային պլանը և ամփոփագիրը:

- ՈԱԱ ծառայության համակարգմամբ «Արևելք» ՏՏ «Կենտրոն» տեղամասի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող թիմը սույն թվականի օգոստոսի 10-ին մասնակցել է ՀՀ ԱԻ նախարարության կողմից «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի տարածքում կազմակերպված «Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը արտադրական վթարի դեպքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնասիրությանը: Ուսումնասիրության նպատակն էր ստուգել արձագանքող ուժերի պատրաստվածությունը՝ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելիս, կատարելագործել ուժերի փոխհամագործակցությունը:


6.3. Դասընթացներ

● ՈԱԱ ծառայությունը առաջնորդվելով Վեոլիա Գրուպի «Գազաբոցային աշխատանքների անվտանգությունը» Ստանդարտի պահանջներով «Նարեկ» գիտահետազոտական ընկերությունում անցկացրել է Տեխնիկական տնօրինության և «Արևելք» Տնօրինության թվով 2 գործողի անվտանգության ամփոփ հրահանգավորման աշխատանքներ և որակավորման քննություն:

● ՈԱԱ ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 23 նոյեմբերի 2006 թվականի N 1939-Ն որոշմամբ հաստատված «Մպառոդների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգի պահանջներով, «Նարեկ գիտահետազոտական» ՓԲԸ-ի հավատարմագրված փորձագետների կողմից կազմակերպել է «Արևելք» ՏՏ էլտնտեսությունները սպասարկող/շահագործող թվով 10 աշխատակցի էլեկտրաանվտանգության II խմբի որակավորման դասընթացները:



2018թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում առողջության և անվտանգության մասով կազմակերպված դասընթացներ/թեստավորումներ*



* թեստավորումն իրականացվել է ՖՀՄՈՒԿ-ում նախատեսվող կրմերցիոն մասնագետ-տեսուչների մասնագիտական որակավորման դասընթացի շրջանակներում

6.4. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացող միջոցառումների կիրառում

● Ելնելով Ընկերության ՀՏԿ-ներում և վարչական շենքերում Անվտանգության և Առողջության ռիսկերի գնահատման, կանխարգելիչ միջոցառումների կիրառման և աշխատակիցների անվտանգության մասով հրահանգավորման գործընթացի գնահատման, ինչպես նաև Ընկերության Արտադրական Վտանգավոր Օբյեկտների տեխանվտանգության փորձաքննությունների նախապատրաստական աշխատանքների պատշաճ կազմակերպման անհրաժեշտությունից, ծառայության անվտանգության պատասխանատուներն իրականացրել են պլանավորված Անվտանգության ստուգայցներ՝ «Հայկաշեն 1-2», «Հայկաշեն 3-4», «Հովունի ՕԿՁ», «Մայիսյան ՕԿՁ» սանիտարական



գոտիներում (պոմպակայաններում, քլորակայաններում, կապ-տաժային կառուցվածքներում):
 Կատարված ստուգայցների արդյունքները գրանցվել են հատուկ ստուգաթերթիկներում, որոնց հիման վրա մշակվել է անվտանգության ամփոփ հաշվետվություն:



● Միաժամանակ ՈԱԱ ծառայության կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 9 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով զծանշման, էքսկավատորի անվտանգ շահագործման ուղղությամբ:



«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am

